ԱՊԱՔԱՂԱՔԱԿԱՆԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՐԺՈՒՄ, ԹԵ՞ ՀԱՆՐԱՅԻՆ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՆՐՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական
ստորաբաժանման ընդհանուր իրավաբանական առարկաների ամբիոնի պետ
DOI: 10.63925/18294847-2026.blj22-13

Ամփոփագիր: Հոդվածում ուսումնասիրվել են ապաքաղաքականացվածություն երաշխավորելու գործընթացների, միջոցների բազմազանությունը, բնորոշման առանձնահատկությունները և հիշյալ սկզբունքով սահմանափակված հանրային ծառայողների վարքագծի հնարավոր դրսևորումները: Ընտրված թեմայի համատեքստում հեղինակն անդրադարձել է «քաղաքական զսպվածություն» և «քաղաքական չեզոքություն» եզրույթների տեսահիրավական մեկնաբանությանը, հատկապես՝ վերջիններիս տարբերակմանն իրավապահ գործունեություն իրականացնող պաշտոնատար անձանց շրջանակում: Ընտրված թեմայի արդիականությունը պայմանավորված է քաղաքականությամբ զբաղվելու արգելքի սկզբունքի երկակի, հաճախ իրարամերժ որակումներով և կանխատեսելի գիտական չափանիշներ և կիրառում ապահովելու անհրաժեշտությամբ: Այս թեմայի հետազոտության նպատակն է բացահայտել հանրային պաշտոնյայի քաղաքական չեզոքության և քաղաքական զսպվածության հակասական ընկալումների խորքային պատճառները, համալիր անդրադառնալ իրավական կարգավորումների տրամաբանությանը, ինչպես նաև լուծել հանրային ծառայության սահմանափակումների և անձի քաղաքական իրավունքների խելամիտ ներդաշնակեցման հիմնախնդիրը: Հոդվածում ընտրված թեման ուսումնասիրելիս կիրառվել են իրավահամեմատական, դեդուկտիվ, ինդուկտիվ, ինչպես նաև վերլուծության և վերացականության մեթոդները:

Ներածություն

Կարծիքի արտահայտման ազատության ու տեղեկատվության ազատության իրավունքները՝ որպես ժողովրդավարության ամրապնդման կարևոր հենասյուներ, լրջագույն նախապայմաններ են հանրային կառավարման ոլորտում թափանցիկության

համար և երաշխավորվում են Սահմանադրությամբ, օրենքներով ու միջազգային իրավական փաստաթղթերով: Ներկայումս կարևորվում է կարծիքի արտահայտման ազատության վերաբերյալ հանրության իրազեկվածության, կարողությունների զարգացմանն ու այդ համատեքստում հանդուրժողականության մթնոլորտի ձևավորման աշխատանքները՝ ուղղված հանրության բոլոր դերակատարներին, այդ թվում՝ քաղաքական և հանրային գործիչներին:

«Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) արձանագրում է, որ. «Եվրոպական երկրների օրենսդրական և սահմանադրական դրույթները, ինչպես նաև համապատասխան նախադեպային իրավունքը, ցույց են տալիս, որ խոսքի ազատության երաշխիքները տարածվում են նաև քաղաքացիական ծառայողների վրա[1]:

Ընդ որում՝ ժողովրդավարական հասարակությունում խոսքի ազատությունը հանրային մասնակցության և քաղաքական գործընթացների հիմնաքարային գործիքն է: Պետական ծառայողները, ինչպես հասարակության մյուս անդամները, ունեն քաղաքական իրավունքներ, սակայն դրանց իրացման շրջանակները չեն կարող նույնացվել և պայմանավորված են շահերի բախման հնարավոր կառավարման պարտականությամբ, այլ կերպ ասած՝ ապաքաղաքականացմամբ[2]:

Բանալի բառեր: Ապաքաղաքականացում, հանրային ծառայող, քաղաքական զսպվածություն, քաղաքական չեզոքություն, իրավական որոշակիություն, հրապարակայնություն:

Հիմնական հետազոտությունը

Ապաքաղաքականացման գործընթացները բազմազան են և ունեն որոշակի բովանդակություն՝ ըստ սոցիալ-քաղաքական ոլորտների: Է. Ֆոստերի դիտարկմամբ այսօր ապաքաղաքականացումը զարգացած հասարակություններում կառավարման ժամանակակից մեթոդները հասկանալու ամենակարևոր գործիքներից մեկն է[3]: Իսկ Մ. Վուդը և Մ. Ֆինդերսն առաջարկում են ապաքաղաքականացումը դիտարկել

[1] Տե՛ս COMPILATION OF VENICE COMMISSION OPINIONS AND REPORTS CONCERNING COURTS AND JUDGES, Strasbourg, 12 July, 2019 CDL-PI(2018)008, 80 p. էջ 32:

[2] Հասանելի աղբյուրը՝ https://www.publicservice.govt.nz/guidance/principles-guidance/politically-neutral/political-neutrality-for-public-servants-as-individuals (16.02.2026 14:40):

[3] Տե՛ս **Foster E. A.**, **Kerr P.**, **Byrne C**. Rolling Back to Roll Forward: Depoliticization and the Extension of Government. Policy and Politics, 2014, 42 (2), 225-241:

կառավարական, հանրային և մասնավոր ոլորտներում: Կառավարական (Governmental) ոլորտում ապաքաղաքականցումը նշանակում է ընտրված քաղաքական գործիչների կողմից որոշումների ընդունման գործընթացի տեղափոխումն անկախ փորձագետների, գործակալությունների, հանձնաժողովների, առանձին դեպքերում նաև դատարանների դաշտ՝ նվազեցնելով ուղղակի հաշվետվողականությունը: Հանրային (Public) ոլորտում ապաքաղաքականացումը քաղաքացիների «ակնկալիքների կառավարումն է», որն իրականացվում է զանգվածային լրատվության միջոցների կողմից և արտահայտվում առանձին հարցերի դուրսմղմամբ հանրային քննարկման ոլորտից: Մասնավոր (Private) ոլորտում ապաքաղաքականացումն արտահայտվում է հասարակական խնդիրների լուծման բեռն անհատի ուսերին տեղափոխելով: Չնայած այն հանգամանքին, որ ապաքաղաքականացման ինստիտուտի վերաբերյալ ուսումնասիրությունների առաջին փուլը բովանդակում է նեոլիբերալիզմի ապաքաղաքականացված ազդեցությունը պետական կառավարման և քաղաքականության վրա, հաջորդ փուլերում հիմնախնդրի ուսումնասիրումն ընդգրկում է նաև զարգացման գործընթացների հետազոտության, միջազգային քաղաքականության, սոցիոլոգիայի, կուսակցությունների քաղաքական գործունեության ոլորտները[4]:

Ըստ Ե. Վ. Ուշակովի՝ ապաքաղաքականացումը գործընթացների և գործողությունների ամբողջություն է, որոնք ուղղված են այս կամ այն թեմաների (հիմնախնդիրներ, օրակարգեր, քննարկման ոլորտներ և այլն) քաղաքականությունից դուրս գտնվելու կարգավիճակների փոփոխմանը: Այսպիսով՝ ապաքաղաքականացումը՝ որպես բազմազան երևույթների ամբողջություն, ունի ընդհանուր վեկտոր, որն ուղղված է քաղաքական ոլորտի այս կամ այն բաղադրիչների համար ոչ քաղաքական կարգավիճակ «ձևավորելուն» և ըստ էության՝ անկախ գործելու երաշխիք, քանզի այս սկզբունքը ոչ միայն թույլ չի տալիս, որ քաղաքականության նկատմամբ ազդեցություն ունենան քաղաքականության հետ անմիջական առնչություն չունեցող ազդեցիկ բարձրաստիճան պաշտոնյաները, պետական հատուկ ծառայողները, այլև իրենք հնարավորինս դուրս մնան քաղաքական հնարավոր ներգործությունից: Ոչ պակաս կարևոր է այն, որ հենց այստեղ է կազմավորվում «քաղաքականի» և «ոչ քաղաքականի»

[4] Տե՛ս **Wood M., Flinders M.** Rethinking Depoliticization: Beyond the Governmental, Policy and Politics, 2014, vol. 42, N 2, 151-170:

միջև առկա դինամիկ, փոփոխական տարբերությունը: «Ոչ քաղաքական» կարգավիճակի սահմանումը կարող է իրականացվել տարբեր ձևերով՝ սկսած հիմնավորված, արդարացված (ապաքաղաքականացված) քննարկումներից, մինչև հատուկ ծրագրերի՝ բարեփոխումների իրականացումը, ինստիտուցիոնալ փոփոխությունների ներդնումը, կառավարության որոշումների ընդունումը (չընդունումը) և այլն[5]:

Այսինքն՝ ապաքաղաքականացվածության սկզբունքը մի կողմից նպաստում է պաշտոնական դիրքի չարաշահմամբ քաղաքական գործընթացների վրա ապօրինի ազդեցությունները բացառելուն, մյուս կողմից՝ զրկում է հիրավի պահանջված քաղաքական ու մասնագիտական փորձ ունեցող պաշտոնյաների ներուժը հանրային շահերին ծառայեցնելու կարևոր հնարավորությունից: Ըստ էության՝ հիշյալ սկզբունքն առանձնանում է երկակի, հաճախ իրարամերժ որակներով, որոնց ներդաշնակեցման անհրաժեշտությունը ձեռք է բերել խիստ արդիական նշանակություն: Ընդ որում՝ այս հատվածի նկատմամբ քաղաքական ուժերի վերաբերմունքը ևս միասնական չէ՝ իշխող քաղաքական ուժը հակված է քողարկված եղանակներով օգտվելու ապաքաղաքականացվածության սկզբունքով սահմանափակված հանրային պաշտոնյաների ծառայությունից, մինչդեռ, նույն այդ փաստի հաշվառմամբ, ընդդիմադիր քաղաքական ուժերը ձգտում են բացահայտել այդպիսի դրսևորումները և հնարավորինս բացառել համագործակցությունը[6]:

Հանրային ծառայողները, զրկված լինելով քաղաքական ուժերի հանիրավի թիրախավորմանը համարժեք արձագանքելու հնարավորությունից, փորձում են այլընտրանքային գործիքների դիմել, սակայն անխուսափելիորեն բախվում են դեռևս հստակ չուրվագծված քաղաքական չեզոքության արգելքի հետ, իսկ նշված ոլորտում իրավական որոշակիության բացակայությունն էլ ավելի է վատթարացնում պետական համակարգի բնականոն գործունեության ընդհանուր վիճակը՝ գործ ունենալով ժողովրդավարության ու բյուրոկրատիայի բախման միանգամայն նոր դրսևորումների հետ, որոնք թերևս հանգեցնում են ժողովրդավարության սկզբունքների խոցելիությանը:

---

[5] Տե՛ս **Ушаков Е. В.** Процессы деполитизации в решении общественных проблем: аспекты критики парадигмы неолиберализма. 2023, N 12 ст. 149 -150:

[6] Տե՛ս **Simon Baddeley and Kim James**, From Political Neutrality to Political Wisdom, Politics (1987)7(2), 30, էջ 39:

Այս առնչությամբ հետաքրքիր է կառավարման հիմունքների գերմանացի տեսաբան, փիլիսոփա Մաքս Վեբերի դիտարկումը, որ, ըստ էության, ժողովրդավորությունը, գոնե ձևական հարթությամբ, ունի բյուրոկրատիայի աջակցության կարիքը, մինչդեռ բյուրոկրատիան չունի ժողովրդավարության կարիքը[7]:

Հարկ է նկատել, որ օրենսդիրը ևս հստակ չի սահմանզատում «քաղաքական գործունեությամբ զբաղվելը» «քաղաքական զսպվածությունից» և «քաղաքական չեզոքությունից», ուստի ելակետ է ընդունել այն, որ քննարկվող դեպքում քաղաքական զսպվածությունը և քաղաքական չեզոքությունը քաղաքական գործունեության բաղադրատարրեր են: Մյուս կողմից՝ այսպիսի մոտեցումը խնդրահարույց է, քանի որ այլ պաշտոնյաների վերաբերյալ սահմանադրական նորմերի բովանդակությունը ցույց է տալիս, որ Սահմանադրությունը քաղաքական գործունեությամբ զբաղվելը հստակ տարանջատում է քաղաքական զսպվածությունից և քաղաքական չեզոքությունից՝ դրանք ամրագրելով որպես վարքագծի ինքնուրույն դրսևորումներ:

Այնուամենայնիվ, առանձնահատկություններին անդրադառնալիս «քաղաքական զսպվածության» պարագայում կարող ենք ընդգծել վերը նշված վավերապայմաններին համահունչ արտահայտություններից, իսկ «քաղաքական չեզոքության» պարագայում՝ գործունեությունից զերծ մնալը: Այսպես օրինակ՝ «քաղաքական զսպվածության» արգելքի խախտում կարող է դիտարկվել դատավորի կողմից հնչած այնպիսի արտահայտությունը, որով վերջինս մասնագիտական քննարկումների ժամանակ, քննադատելով որևէ իրավական ակտի նախագիծ, դրա ենթադրյալ թերությունները փոխկապակցում է նախագծի հեղինակ քաղաքական ուժի գաղափարների և կարողությունների հետ: «Քաղաքական չեզոքության» օրինակ կարող է լինել այն, երբ դատախազը դե ֆակտո քաղաքական հետապնդումներ է նախաձեռնում որևէ քաղաքական ուժի ներկայացուցիչների նկատմամբ՝ արտաքուստ ժխտելով այդպիսի ընտրանքային գործելաոճի իրական շարժառիթները:

«Քաղաքական զսպվածություն» և «քաղաքական չեզոքություն» եզրույթները բովանդակային կտրվածքով գրեթե նույնական են: Ընդհանուրը թերևս այն է, որ վերջիններս որևէ կերպ չեն կարող առնչվել վերը նշված մեկնաբանությամբ՝

[7] Տե՛ս **Weber M.,** (1947), The Theory of Social and Economic Organization (New York: Oxford University Press). էջ 341:

քաղաքական գործունեության հետ: Կարծում ենք՝ օրենսդիրն առանձնապես չի անդրադարձել այս եզրույթների բովանդակությունն առավել որոշակի ամրագրելուն, ուստի, որպես կանոն, բավարարվել է «ապաքաղաքականացվածության սկզբունքի խախտում» ընդհանուր եզրույթով (օրինակ՝ համաձայն «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի՝ դատավորը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ հիմնադիր, կուսակցությունում պաշտոն զբաղեցնել, կուսակցության անունից ելույթներ ունենալ կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Դատավորը հրապարակային ելույթներում և ցանկացած այլ հանգամանքներում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն: Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ մասնագիտական քննարկումները կամ եզրակացությունները, դատական իշխանության գործունեության վերաբերյալ քննարկումների ժամանակ արտահայտած կարծիքները և հայտարարությունները, այդ թվում՝ հրապարակային, ապաքաղաքականացվածության սկզբունքի խախտում չեն համարվում)[8]: Կարծում ենք, որ «ապաքաղաքականացվածության սկզբունքի խախտում» հասկացությունն այնքան էլ արդարացված չէ, քանզի այն ակնհայտ համընդհանուր բովանդակություն ունի և հավասարապես կարող է կիրառվել բոլոր երեք սահմանափակումների վրա, այդ թվում՝ քաղաքական գործունեության[9]:

Անդրադառնալով այն հարցին, թե արդյոք դատավորի արտահայտման ազատության սահմանափակումը համապատասխանում է «սոցիալական անհրաժեշտության» և «օրինաչափ նպատակի համաչափության» չափանիշներին, ՄԻԵԴ-ն իր դատավարական պրակտիկայում հարցը քննարկում է կոնկրետ գործի հանգամանքների լույսի ներքո: ՄԻԵԴ-ի դատավարական պրակտիկայի ուսումնասիրությունից պարզ են դառնում այն գործոնները, որոնք առավել կարևորություն ունեն կոնվենցիայի խախտման առկայությունը կամ բացակայությունն արձանագրելիս. ա) դատավորի պաշտոնը, բ) խնդրո առարկա հայտարարության

[8] Տե՛ս «ՀՀ Դատական օրենսգիրք» 2018թ. փետրվարի 7-ի ՀՀ սահմանադրական օրենքը, հոդված 4 (Տե՛ս ՀՀՊՏ 2018.02.12/10 (1368) Հոդ. 143):

[9] Տե՛ս **Գևորգ Դանիելյան** «Քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքը» «Բանբեր Երևանի Համալսարանի Իրավագիտություն» Երևան 2022 № 2 (37) էջ 17:

բովանդակությունը, գ) համատեքստը, որում հայտարարությունն արվել է, դ) դատավորի նկատմամբ կիրառված պատասխանատվության միջոցների բնույթը և խստությունը[10]:

Իրավական որոշակիության բացակայության համատեքստում անդրադառնանք նաև «Հավաքների ազատության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի իմպերատիվ պահանջի (դատախազները, քննիչները, ինչպես նաև զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողները հավաքներին մասնակցելիս պետք է քաղաքական չեզոքություն և զսպվածություն ցուցաբերեն) և 3-րդ մասի (դատավորները, դատախազները, քննիչները, ինչպես նաև զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողներն իրավունք չունեն հավաքին մասնակցելու ծառայողական համազգեստով)[11] ոչ հստակ ձևակերպմանը: Ըստ ամենայնի՝ դժվար է մեկնաբանել քաղաքական զսպվածության ցուցաբերումը՝ առանց համազգեսի հավաքներին մասնակցելով: Ի վերջո, միայն համազգեստը չկրելն ինքնին բավարար չէ պաշտոնատար անձանց քաղաքական հայացքները չեզոք արտահայտելու համար:

Քննարկվող հարցադրման շրջանակներում թերևս տեղին է Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության փորձագետների կողմից պատրաստված «Հավաքների ազատության ղեկավար սկզբունքների վերաբերյալ» ուղեցույցում նշված այն դիտարկումը, որ չեզոքությունը չպետք է մեկնաբանվի կարծիք ունենալու կամ արտահայտելու ազատության անհարկի սահմանափակմամբ: Հետևաբար, օրենսդրությունը չպետք է սահմանափակի ոստիկանական կամ զինվորական անձնակազմի հավաքների ազատությունը, եթե սահմանափակման պատճառներն անմիջապես կապված են նրանց ծառայողական պարտականությունների հետ, կամ պետք է սահմանափակվի այն չափով, որը բացարձակապես անհրաժեշտ է մասնագիտական պարտականությունների տեսանկյունից: Սահմանափակումները պետք է կիրառվեն միայն այն դեպքում, երբ հավաքի մասնակցությունը կվիճարկեր

[10] Տե՛ս Application no 20261/12, Baka v. Hungary Judgment of 23 June, 2016 Para. 162 (Հասանելի աղբյուրը՝ https://hudoc.echr.coe.int/fre#{%22itemid%22:[%22001-163113%22]} 21.02.2026), Application no 29492/05 Kudeshkina v. Russia Judgment 26 Febuary 2009 Para 82 (Հասանելի աղբյուրը՝ https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-91501%22]} 21.02.2026):

[11] Տե՛ս «Հավաքների ազատության մասին» ՀՀ 2011թ. ապրիլի 14-ի օրենքը, հոդված 8 (Տե՛ս ՀՀՊՏ 2011.04.22/23(826), Հոդ. 452):

ոստիկանական կամ զինվորական անձնակազմի՝ հասարակության բոլոր հատվածներին ծառայելու չեզոքությունը[12]:

Եզրակացություն

Մեր դիտարկմամբ՝ համարժեք ու համալիր իրավական կարգավորումների արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է քաղաքական չեզոքության ցուցաբերման և առանց համազգեստի հավաքների մասնակցելու հետ կապված իրավական անորոշության խնդիրը լուծել՝ երաշխավորելով հանրային ծառայության սահմանափակումների և անձի քաղաքական իրավունքների խելամիտ ներդաշնակեցման հիմնախնդիրը:

Իրավական անորոշության խնդիրը հնարավոր է վերացնել հանրային իշխանության մարմինների կողմից իրականացվող իրավաստեղծ գործունեության կատարելագործման և օրենսդրական տեխնիկայի կանոնների համալիր կիրառման միջոցով, ինչն էլ իր հերթին կնպաստի իրավունքի գերակայության և իրավական անվտանգության ապահովմանը, ինչպես նաև պետության նկատմամբ քաղաքացու վստահության բարձրացմանը: Հարկ է նկատել, որ իրավաստեղծ գործունեության որակը կարևոր ցուցիչ է՝ տվյալ հասարակության ժողովրդավարության, քաղաքակրթության, ինչպես նաև իրավական մշակույթի կայացվածության առնչությամբ: Որքան բարձր է հասարակությունում ժողովրդավարության, քաղաքակրթության և ամբողջությամբ վերցրած իրավական մշակույթի կայացվածության աստիճանը, այնքան մեծ է որակյալ իրավաստեղծ գործունեության հավանականությունը: Իր հերթին իրավաստեղծ գործունեությունը ժողովրդավարության ինստիտուտների զարգացման կարևոր երաշխիք է:

Մեր գնահատմամբ՝ այս համատեքստում մեծ է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի առանձին դրույթների նշանակությունը, որոնք կանոնակարգում են հավասար իրավաբանական ուժի դեպքում այս կամ այն իրավական ակտին նախապատվություն տալուն առնչվող հարցերը, ինչպես նաև իրավական ակտերի կոլիզիաների լուծման կանոնները, ընդ որում՝ յուրաքանչյուր հաջորդ կանոնը կիրառվում է, եթե կիրառելի չէ նախորդ կանոնը: Թերևս օրենսդրական տեխնիկայի

[12] Տե՛ս Խաղաղ հավաքների ուղեցույց, ԵԱՀԿ, ԺՀՄԻԳ 2009, կետ 44 (Հասանելի աղբյուրը՝ https://www.osce.org/ru/odihr/83237?download=true 22.02.2026 16:49):

շրջանակներում կարևորվում է նաև «հատուկ» և «ընդհանուր» նորմերի հարաբերակցության հստակեցումը, ինչի արդյունքում կարող է ամրագրվել իրավակարգավորում, ըստ որի՝ հանրային ծառայողների քաղաքական իրավունքների սահմանափակումները նախատեսող նորմերը չպարունակեն ավելի լայն սահմանափակումներ, քան նախատեսված է «Հանրային ծառայության մասին օրենքով»:

Կարևոր ենք համարում նաև նկատել, որ քաղաքական զսպվածությունը չպետք է ինքնին խոցելի դարձնի այդ սկզբունքով սահմանափակված պաշտոնյաների բնականոն գործունեությունը: Բոլոր դեպքերում, հարկ է զերծ մնալ այնպիսի իրավիճակներից, երբ քաղաքական զսպվածության սկզբունքով կաշկանդված հանրային ծառայողները զրկված են լինում անգամ նվազագույն չափով պաշտպանել իրենց անձը և գործունեությունը: Այս տեսանկյունից, խիստ նպատակահարմար ենք համարում, որպեսզի հնարավորինս որոշակիացվի այդ պաշտոնյաների անկախությունը երաշխավորելու համար պատասխանատու մարմինների կարգավիճակը և իրենց հոգածության տակ գտնվող պաշտոնյաներին տարաբնույթ հանրային մեղադրանքներից պաշտպանելու խնդիրներն ու գործառույթները: Մասնավորապես, այդ քննադատություններին ու մեղադրանքներին արձագանքելը չպետք է թողնել այնպիսի մարմինների հայեցողությանը կամ սահմանել այնպիսի ընթացակարգեր, որին վերջիններս արձագանքում են միայն այն դեպքում, երբ իրենց դիմում է համապատասխան պաշտոնյան: Նկատի ունենք պատասխանատու մարմինների (օրինակ՝ ԲԴԽ, էթիկայի հանձնաժողովներ) այնպիսի գործառույթների պոզիտիվացում, որը հնարավորություն կընձեռի նրանց որոշակի սեղմ ժամանակն անց (24 ժամ կամ 48 ժամ) պաշտոնապես տարածել հերքում կամ պարզաբանում՝ պաշտոնյայի կողմից ենթադրյալ հանցագործության կամ կարգապահական խախտման, պաշտոնյայի անձնական, ընտանեկան կյանքին վերաբերող վարկաբեկող տեղեկության վերաբերյալ:

Ամփոփելով՝ նշենք, որ քաղաքական զսպվածության հիմնախնդիրն ազատությունների և հանրային ծառայության հատուկ պարտավորությունների «բախման» դրսևորում է: Մեր կարծիքով՝ պետական պաշտոնյայի պարտականությունն է զերծ մնալ այնպիսի քաղաքական վարքագծից, որը կարող է վտանգել պետության կամ

պետական մարմնի քաղաքական չեզոքության ընկալումը, քանի որ ժողովրդավարական իրավական պետությունում այս հակասությունը լուծվում է քաղաքական չեզոքության գերակայության սկզբունքով՝ ընդունելով, որ պետական պաշտոնյայի որոշ իրավունքներ կարող են օրինական սահմանափակվել հանրային շահի պաշտպանության նպատակով: Այսպիսով՝ քաղաքական չեզոքությունը հանդես է գալիս ոչ թե որպես ազատությունների մերժում, այլ որպես ժողովրդավարության և պետական ինստիտուտների նկատմամբ հանրային վստահության պահպանման անհրաժեշտ պայման: Իսկ իրավական անորոշության խնդիրը հնարավոր է վերացնել իրավաստեղծ գործունեության և իրավաբանական տեխնիկայի կատարելագործման միջոցով, ինչն էլ իր հերթին իրավունքների և ազատությունների կրողներին և հասցեատերերին հնարավորություն կընձեռի դրսևորելու համապատասխան վարքագիծ:

ДЕПОЛИТИЗАЦИЯ: ОТКАЗ ОТ СВОБОД ИЛИ НЕОБХОДИМОЕ УСЛОВИЕ ДЛЯ ПОДДЕРЖАНИЯ ОБЩЕСТВЕННОГО ДОВЕРИЯ

САФАРЯН АМАЛИЯ

Начальник кафедры общеправовых дисциплин
Учебного полицейского подразделения
Образовательного комплекса МВД РА

Аннотация. В статье исследуется разнообразие процессов и средств обеспечения деполитизации, особенности их определения, а также возможные проявления поведения государственных служащих, ограниченного данным принципом. В контексте выбранной темы автор обращается к теоретико-правовому толкованию понятий «политическая сдержанность» и «политический нейтралитет», в частности, к их разграничению в среде должностных лиц, осуществляющих правоохранительную деятельность. Одновременно был проведен анализ позиций экспертов Европейского суда по правам человека и Организации по безопасности и сотрудничеству в Европе. Актуальность выбранной темы обусловлена двойственной, зачастую противоречивой, трактовкой принципа запрета на занятие политической деятельностью, а также необходимостью выработки предсказуемых научных критериев и обеспечения их применения. Целью исследования является выявление глубинных причин противоречивого восприятия политического нейтралитета и политической сдержанности публичного должностного лица, комплексное рассмотрение логики правового регулирования, а также решение проблемы разумного согласования ограничений публичной службы и политических прав личности. При изучении выбранной темы в статье использованы сравнительно-правовой, дедуктивный, индуктивный методы, а также методы анализа и абстрагирования.

Ключевые слова: деполитизация, государственный служащий, политическая сдержанность, политический нейтралитет, правовая определенность, публичность.

DEPOLITICIZATION: RESTRICTION OF FREEDOMS OR A NECESSARY CONDITION FOR MAINTAINING PUBLIC TRUST?

SAFARYAN AMALYA

Head of the Chair of General Legal Disciplines of the Police Training Unit,
Educational Complex of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia

Abstract. The article examines diverse processes of depoliticization, their characteristics, and the possible forms of civil servants' conduct restricted by the principle of depoliticization. In this context, the author analyzes the concepts of "political restraint" and "political neutrality," as well as the differences between them in relation to officials engaged in law enforcement activities. Meanwhile, the article analyzes the viewpoints of experts from the European Court of Human Rights and the Organization for Security and Co-operation in Europe.

The relevance of the chosen topic is determined by the dual, often contradictory interpretations of the principle prohibiting political engagement, as well as the need to ensure consistent academic standards and practical application.

The purpose of this study is to examine conflicting interpretations of political neutrality and political restraint in public administration, to analyze the rationale of legal norms, and to address the issue of recalibrating restrictions imposed on civil servants with their individual political rights.

The study draws on national legislation and regulatory frameworks established by international legal instruments. In this respect, the jurisprudence of the European Court of Human Rights has been examined alongside national legal practice in order to reveal the essence, the role, and the significance of the principle of depoliticization in public sector. The study employs comparative, deductive, inductive, analytical, and abstraction methods.

Keywords: depoliticization, civil servant, political restraint, political neutrality, legal certainty, publicity.

Օգտագործված գրականության ցանկ

1. «ՀՀ Դատական օրենսգիրք» 2018թ. փետրվարի 7-ի ՀՀ սահմանադրական օրենքը, հոդված 4 (Տե՛ս ՀՀՊՏ 2018.02.12/10 (1368) Հոդ. 143):

2. «Հավաքների ազատության մասին» ՀՀ 2011թ. ապրիլի 14-ի օրենքը, հոդված 8 (Տե՛ս ՀՀՊՏ 2011.04.22/23(826), Հոդ. 452):

3. Գևորգ Դանիելյան «Քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքը» «Բանբեր Երևանի Համալսարանի Իրավագիտություն» Երևան 2022 № 2 (37):

4. COMPILATION OF VENICE COMMISSION OPINIONS AND REPORTS CONCERNING COURTS AND JUDGES, Strasbourg, 12 July 2019 CDL-PI(2018)008,p.80:

5. Խաղաղ հավաքների ուղեցույց, ԵԱՀԿ, ԺՀՄԻԳ 2009: https://u.to/3tZ3Ig (Հղումը կարճեցված է: Դիտման ամսաթիվը 22.02.2026):

6. Ушаков Е. В. Процессы деполитизации в решении общественных проблем: аспекты критики парадигмы неолиберализма. 2023, N 12, 200:

7. Application no 20261/12, Baka v. Hungary Judgment of 23 June 2016 Para. 162 (Հասանելի աղբյուրը՝ https://hudoc.echr.coe.int/fre#{%22itemid%22:[%22001-163113%22]} 21.02.2026), Application no 29492/05 Kudeshkina v. Russia Judgment 26 Febuary 2009:

8. Foster E. A., Kerr P., Byrne C. Rolling back to roll forward:depoliticisation and the extension of government. Policy and Politics, 2014, 42 (2), 250:

9. Simon Baddeley and Kim James, From political neutrality topolitical wisdom, Politics (1987)7(2), 30:

10. Weber M., (1947), The Theory of Social and Economic Organisation (New York: Oxford University Press):

11. Wood M., Flinders M. Rethinking depoliticisation: beyond the governmental, Policy and Politics, 2014, vol 42, N 2, 151-170: Simon Baddeley and Kim James, From political neutrality topolitical wisdom, Politics (1987)7(2), 30:

12. https://u.to/tdZ3Ig (Հղումը կարճեցված է: Դիտման ամսաթիվը 16.02.2026)